

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ  
պրն. Ա. Ջավադյանին**

**Հարգելի պարոն Ջավադյան**

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ են ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող 29.06.12թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է աղբյր 1 թերթ):

**Գործադիր տնօրեն**

**Պապ Բադալյան**

29.06.12թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում եմ <Շեն-Գոնցեռն> ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝**

2012թ-ի հունիսի 29-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում որոշվեց Ընկերության հետագա զարգացման, ընդլայնման, առկա կրեդիտորական պարտքերի մարման և ապրանքային տեսականին ընդլայնելու նպատակով կանխավճարներ կատարելու համար Ամերիաբանկ ՓԲԸ-ից վերցնել վարկ 800,000.00 Եվրոյի չափով:

Ներկայումս Ընկերությունը իր ֆինանսական միջոցների զգալի մասը ուղղում է Ընկերության զարգացման և կառուցման վրա: Մասնավորապես Ընկերության դուստր Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս ՍՊԸ-ն ավարտում է բետոնե բլոկների նոր արտադրամասի կառուցումը և սարքավորումների տեղակայումը սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևան, Արցախի 49 հասցեում գտնվող տարածքում: Այդ նպատակով Լատվիաից ձեռք է բերվել 1.2մլն. USD արժողությամբ իսպանական հոսքագիծ:

Ընկերության դուստր Շեն Գրուպ ՓԲԸ-ում կառուցվում է գիպսի վերամշակման նոր հոսքագիծ, որը թույլ կտա ստանալ ավելի բարձր տոկոսայնության գիպս: Տվյալ ներդրման վրա ծախսվել է շուրջ 400.0 հազ. ԱՄՆ դոլարի սարքավորումներ և աշխատանք: